

# Մովսես Խորենացու անվան համալսարանի ռեկտոր

## Ա.Ս.Աղաբաբյանի

### 2013թ. տարեկան հաշվետվություն

#### Ուսումնական գործընթացի ընթացիկ կազմակերպում

Հաշվետու ուսումնական տարում ձեռնարկվել են ուսումնական գործընթացի բնականոն ընթացքի ապահովմանն ուղղված մի շարք միջոցառումներ: Իրականացվել է բակալավրիատի ու մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման առաջին կուրսի ուսանողների և ԵՄԽՀ-ի միջև ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ պայմանագրերի կնքման գործընթացը:

Հաշվետու ուս.տարվա ուսումնական գործընթացը կազմակերպելու համար հաշվառվել է լսարանային ֆոնդը, իրականացվել են աշխատանքներ այն արդյունավետ օգտագործելու և դասերի կանոնավոր կայացմանն ուղղությամբ:

Զեղչերի կիրառման գործընթացն առավել հստակ և անթերի կազմակերպելու նպատակով ուսումնամեթոդական վարչությունը շարունակել է առաջադիմության վերահսկման աշխատանքները:

#### Կրթական գործունեություն

Հաշվետու ուս.տարում համալսարանում կրթական գործընթացը կազմակերպվել է ԵՄԽՀ 2011-2015թթ. զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսված համապատասխան խնդիրներից ու նպատակներից: Մասնավորապես՝ շարունակել աշխատանքները ծրագրային բարեփոխումների, ուսումնական գործընթացի կազմակերպման ու պլանավորման կատարելագործման, եվրոպական չափորոշիչներին համահունչ որակի ներքին ապահովման համակարգի բարելավման, բոլոր կրթական ծրագրերում և ուսուցման ձևերում կրեդիտային համակարգի իրականացման, դասավանդման և ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացների բարելավման և մի շարք այլ ուղղություններով:

## Կրեդիտային համակարգ

ԵՄԽՀ զարգացման ռազմավարական ծրագրի “Բարձրորակ կրթություն” ռազմավարական նպատակի իրագործման համար առաջադրված խնդիրներից մեկը համալսարանի բոլոր կրթական ծրագրերում և ուսուցման ձևերում կրեդիտային համակարգի ընդլայնված կիրառությունն ապահովելն է:

Պարբերաբար իրականացվել են “Կրեդիտային համակարգին” նվիրված ճանաչողական և տեղեկատվական սեմինարներ և լսումներ:

Կրեդիտային հենքով ուսումնական ծրագրերի կազմմանը ցուցաբերվել է համակարգային մոտեցում:

Ուսուցումը մագիստրատուրայում բարելավելու նպատակով Մովսես Խորենացու անվան համալսարանում գործուն աշխատանքներ են տարվում կրեդիտային հենքով մագիստրոսական ուսումնական պլանների և ծրագրերի առավել հստակ կիրառման ուղղությամբ:

### Ընդունելության նախապատրաստում

#### Ընդունելություն

2012/13 ուս.տարում բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում դիմորդների թիվը դարձել համապատասխանաբար 137 և 19 :

Կենտրոնացված ընդունելության համակարգի դիմորդների ընդհանուր հոսքում համալսարանի բակալավրիատի դիմորդների բաժնեմասը կազմել է 3,6 %:

2012/13 ուս.տարում բակալավրիատ ընդունվածների թիվը կազմել է 130, իսկ մագիստրատուրա՝ 18 :

Հաշվետու ուս.տարում ԵՄԽՀ օտարերկրյա դիմորդների թիվը բակալավրիատում կազմել է 45, իսկ մագիստրատուրայում 8:

2012/13 ուս.տարում հեռակա ուսուցման համակարգում դիմորդների թիվը բակալավրիատում կազմել է 90: Հաշվետու տարում մեծ աշխատանք է տարվել ավագ դպրոցների և պետական մասնագիտական հաստատությունների 2012/13 ուս.տարվա շրջանավարտների հետ, նրանց ներկայացվել են համալսարանական մասնագիտությունները, ծանոթացրել շարունակական կրթության և ընդհանուր հիմունքներով բակալավրի ծրագրով բուհ ընդունվելու կարգին:

Խիստ կարևորելով հանրակրթային դպրոցների բարձր դասարանների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքները՝ վարչությունը հաշվետու տարվա ընթացքում մայրաքաղաքի և մարզերի 100-ից ավելի դպրոցների աշակերտների համար կազմակերպել է ճանաչողական այցեր և դասախոսություններ:

Վերոհիշյալ համալիր աշխատանքների շնորհիվ է նաև ապահովվել վերջին տարիների դիմորդների թվի անընդհատ աճը:

### Հիմնական ուսանողական համակազմ և շրջանավարտներ

2012/13 ուս.տարում ԵՄԽՀ առկա ուսուցման համակարգում սովորողների թվակազմը եղել է 439, որից 400 բակալավրիատում, իսկ՝ 39՝ մագիստրատուրայում:

Հեռակա ուսուցման համակարգում սովորել է 309 ուսանող:

Օտարերկրյա ուսանողների ընդհանուր թիվը բակալավրում կազմել է 108, որից 24 -ը առկա ուսուցմամբ, իսկ 34՝ հեռակա, իսկ մագիստրատուրայում՝ 13:

Համալսարանի հիմնական ուսանողական թվակազմում մագիստրոսական համակազմի հաշվեկշիռը 5,2% է, իսկ օտարերկրյա և հեռակա ուսուցման ուսանողներինը՝ համապատասխանաբար 16.7 %, 44.8 %:

2012/13 ուս.տարում համալսարանը տվել է առկա ուսուցմամբ 170 շրջանավարտներ, որից 150 -ը՝ բակալավրի կրթական ծրագրով, 20-ը՝ մագիստրոսի, իսկ հեռակա ուսուցմամբ 56 շրջանավարտ:

Առկա ուսուցմամբ բակալավրիատը գերազանցիկության դիպլոմով ավարտել է 22 շրջանավարտ, մագիստրատուրան՝ 8: Հեռակա ուսուցմամբ բակալավրիատը գերազանցիկության դիպլոմով ավարտել է 4 շրջանավարտ:

Համաձայն ՀՀ կառավարության 2011թ. մարտի 3-ի N197-Ն որոշման (ոչ պետական բուհերի նախորդ տարիների շրջանավարտների պետական նմուշի դիպլոմ ստանալու համար ամփոփիչ կարգը հաստատելու մասին) և ՀՀ ԿԳ նախարարի համապատասխան հրամանի 2013թ. մայիսի 17-ից մինչև հունիսի 8-ը ԵՄԽՀ-ում կազմակերպվեցին ամփոփիչ ատեստավորման քննություններ գրաֆիկով նախատեսված բոլոր մասնագիտություններով:

ՀՀ ԿԳ նախարարության կողմից բակալավրի կրթական ծրագրով թույլատրված 45 ուսանողներից քննություններին մասնակցել է 30 -ը, որոնցից 22 -ը քննությունները հանձնել են դրական գնահատականներով, այդ թվում երկու շրջանավարտներ քննությունները հանձնել են “գերազանց” գնահատականներով, որոնցից մեկը քննական հանձնաժողովի որոշմամբ արժանացել է գերազանցության դիպլոմի:

	Թույլատրվել է մասնակցելու	Մասնակցել են	Միայն դրական գնահատականներ	Միայն գերազանց գնահատականներ	Գերազանցության դիպլոմ	Չեն մասնակցել կամ ստացել են անբավարար
Հայոց լեզու և գրականություն /բակ/	19	16	11	-	-	8
Օտար լեզու և գրակ. /բակ/ (անգլերեն լեզու) /մագ./	6	0	0	0	0	6
	2	2	2	1	1	0
Ինֆորմատիկա և կիր. /բակ/ մաթեմատիկա	14	9	7	0	0	7
Միջազգային տնտ. /բակ/ հարաբերություններ /մագ./	3	2	1	-	-	1
	1	1	1	1	-	-

Մագիստրատուրա

Օտար լեզու և գրականություն (անգլերեն լեզու)						
Միջազգային տնտ. հարաբերություններ						
Իրավագիտություն	2	2	2	2	1	0

Շրջանավարտները

2013թ. համալսարանի ռեկտորի հրամանով հավատարմագրված մասնագիտությունների գծով առկա բաժնում թույլատրված 156 ուսանողներից մասնակցել են բոլորը, որոնցից 150 քննությունները հանձնել են միայն դրական գնահատականներով, այդ թվում 23 գերազանց գնահատականներ, որոնցից 22 ը

պետական քննական հանձնաժողովի որոշմամբ արժանացել են գերազանցության դիպլոմի;

Հեռակա բաժնում ռեկտորի հրամանով քննություններին թույլատրված 58 ուսանողներից քննություններին մասնակցել են բոլորը, որոնցից 56 ստացել են դրական գնահատականներ, այդ թվում 4 ուսանողներ քննությունները հանձնել են “գերազանց” գնահատականներով, որոնցից 4 պետական քննական հանձնաժողովի որոշմամբ արժանացել են գերազանցության դիպլոմի:

Մագիստրատուրայի բաժնում ռեկտորի հրամանով մագիստրոսական թեզերի պաշտպանության թույլատրված 20 ուսանողներից մասնակցել են 20 ը, որոնք բոլորն էլ ստացել են դրական գնահատականներ: Նրանցից 8-ը քննական հանձնաժողովի որոշմամբ արժանացել են գերազանցության դիպլոմի:

Ըստ մասնագիտությունների պատկերը հետևյալն է.

	Թույլատրվել է մասնակցելու	Մասնակցել են	Միայն դրական գնահատականներ	Միայն գերազանց գնահատականներ	Գերազանցության դիպլոմ	Չեն մասնակցել կամ ստացել են անբավարար
Հայոց լեզու և գրականություն	18	18	16	3	3	2
Օտար լեզու և գրականություն (անգլերեն լեզու)	10	10	10	2	2	0
Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	14	14	14	4	4	0
Մանկավարժություն և մեթոդիկա	33	33	32	3	3	1
Միջազգային տնտ. հարաբերություններ	26	26	23	5	4	3
Իրավաբանական	55	55	55	6	6	0

Հեռակա բաժին

	Թույլատրվել է մասնակցելու	Մասնակցել են	Միայն դրական գնահատականներ	Միայն զերազանց գնահատականներ	Գերազանցության դիպլոմ	Չեն մասնակցել կամ ստացել են անբավարար
Հայոց լեզու և գրականություն	3	3	3	0	0	0
Օտար լեզու և գրականություն (անգլերեն լեզու)	5	5	5	0	0	0
Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	8	8	7	1	1	1
Մանկավարժություն և մեթոդիկա	13	13	12	0	0	1
Միջազգային տնտ. հարաբերություններ	8	8	8	0	0	0
Իրավաբանական	12	12	12	6	5	0

Մագիստրատուրայի բաժին

	Թույլատրվել է մասնակցելու	Մասնակցել են	Միայն դրական գնահատականներ	Միայն գերազանց գնահատականներ	Գերազանցության դիպլոմ	Չեն մասնակցել կամ ստացել են անբավարար
Հայոց լեզու և գրականություն	4	4	4	4	2	0
Օտար լեզու և գրականություն (անգլերեն լեզու)	3	3	3	1	1	0
Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	0	0	0	0	0	0
Մանկավարժություն և մեթոդիկա	0	0	0	0	0	0
Միջազգային տնտ. հարաբերություններ	1	1	1	0	0	0
Իրավաբանական	12	12	12	6	5	0

Դասախոսական կազմ և ուսումնական բեռնվածություն

2012/13 ուս. տարում համալսարանի դասախոսական կազմում եղել է 45 դասախոս, որից պրոֆեսոր՝ 2, դոցենտ 25, ասիստենտ և դասախոս 18: Այդ կազմի 60% -ը ունի գիտական աստիճան: Իգական սեռի հիմնական դասախոսների հաշվեկշիռը կազմել է 46,7%:

Շարունակվել է ԵՄԽՀ դասախոսական կազմի երիտասարդացման գործընթացը:

Հաշվետու տարում դասախոսական կազմը համալվել է 7 նոր դասախոսներով: Դասախոսական կազմում մինչև 35 տարեկան դասախոսների թիվը կազմում է 8, 35-65 տարեկանները՝ 29, իսկ 65-ից բարձր՝ 8:

## Դասախոսների որակավորման բարձրացում և մասնագետների վերապատրաստում

ԵՄԽՀ դասախոսական կազմի մասնագիտական որակն ու գործունեությունն ապահովելու նպատակով կատարել և ապագայում պլանավորել է կատարելու մի շարք ընթացակարգեր:

### Պլանավորում և կառավարում

Աշխատանքներ են տարվել ԵՄԽՀ 2011/15 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման մոնիթորինգի ուղղությամբ: Մասնավորապես՝ ծրագրի իրականացման ժամակացույց-պլանում հաշվետու ուս.տարվա համար նախատեսված գործողությունների կատարողականի մոնիթորինգի համաձայն 2012/13 ուս.տարում նախատեսված խնդիրների իրականացմանն ուղղված գործողությունները և միջոցառումները հիմնականում կատարվել են:

ԵՄԽՀ որակի ինքնագնահատման իրականացման շրջանակներում կատարվել է համալսարանի ուժեղ և թույլ կողմերի վերահսկում (SWOT վերլուծություն) ԵՄԽՀ հետագա գործունեությունը և ռազմավարությունը առավել արդյունավետ կերպով ուղղորդելու համար:

### Միջազգային համագործակցություն

Բուհում սովորում են 121 օտարերկրյա ուսանողներ:

Կնքվել է պայմանագիր TIR-ի հետ:

2013թ. Նոյեմբերի 22-ին համալսարանը համաշխարհային բանկի կողմից ստացել է դրամաշնորհ,որի իրականացման ժամկետ էր սահմանվել մինչև 2014 թ. Նոյեմբեր ամիսը: ԾԻԿ –ի կողմից կատարվել են հատուկ առաջադրանքներ,վերլուծություններ և համալսարանը կատարել է բոլոր աշխատանքները ժամանակին /ըստ եռամսյակների/ համապատասխան:



## Որակի ապահովում

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են համալսարանում ստեղծված Որակի ապահովման կենտրոնի զարգացումը, որակի ապահովման նոր մեխանիզմների մշակման և կատարելագործման գործընթացները: Բուհը Կենտրոնական բանկի կողմից դրամաշնորհ է շահել բուհում Որակի ապահովման կենտրոնի զարգացման նպատակով: Դրամաշնորհի շրջանակներում իրականացվել են մի շարք գործողություններ որակի ապահովման գործունեությունը բարելավելու և բուհում որակյալ կրթության մակարդակը բարձրացնելու նպատակով: Որակի ապահովման կենտրոնի կողմից կազմակերպվել են հանդիպումներ բուհի ուսանողների, դասախոսական կազմի և վարչական կազմի ներկայացուցիչների հետ նրանց ներգրավվածությունը որակյալ կրթություն ապահովելու գործընթացում մեծացնելու նպատակով: